

«ՃՇԳՐՏՎՈՂ ՏՈՎՈՍԱՐԴՈՒՅՔԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան

---/--/--թ.

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.09.1992թ. որոշմամբ, գրանցման համար 50, վկայական թիվ 0154, հասցե՝ ք.Երևան, Վ. Սարգսյան 2), այսուհետ՝ «Բանկ», ի դեմս Բանկի անունից հանդես եկող իրավասու անձի, և այսուհետ «Հաճախորդ» կամ «Վարկառու», մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին թիվ՝ ----- պայմանագրի անբաժանելի մասը կազմող «Ճշգրտվող տոկոսադրույքի սահմանման և հաշվարկման մասին» սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Կողմերը սույնով սահմանում են թիվ _____ պայմանագրով նախատեսված վարկի տոկոսադրույքի (տոկոսի չափի) պարբերական վերանայումը և փոփոխման կարգը՝ կապված շուկայական տոկոսադրույքների համահունչ փոփոխության հետ, ինչի արդյունքում ժամանակի ցանկացած պահին տոկոսադրույքները հնարավորինս համապատասխանում են շուկայական տոկոսադրույքներին՝ Համաձայնագրով սահմանված կարգով:
- 1.2. Համաձայնագիրը հանդիսանում է թիվ _____ **Վարկային պայմանագրի /այսուհետ՝ Հիմնական Համաձայնագիր/** անբաժանելի մասը:
- 1.3. Հիմնական Համաձայնագրով սահմանված տոկոսադրույքը Կողմերը սույնով դիտարկում են իբրև ճշգրտվող և փոփոխական /այսուհետ՝ ճշգրտվող տոկոսադրույք/ Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

2 ՃՇԳՐՏՎՈՂ ՏՈՎՈՍԱՐԴՈՒՅՔԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

- 2.1. Հիմնական Համաձայնագրով սահմանված ճշգրտվող տոկոսադրույքը կազմված է հետևյալ բաղկացուցիչներից (տարրերից).
 - 2.1.1. Փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)
 - 2.1.2. Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ
- 2.2. **Ճշգրտվող տոկոսադրույքը** Համաձայնագրով սահմանված կարգով հաշվարկված անվանական տոկոսադրույք է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $S_x = S_p + S_{ֆիքս}$ *որտեղ՝* S_x – ճշգրտվող տոկոսադրույք, S_p – Փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք), $S_{ֆիքս}$ – Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ

Մինևույն ժամանակ ճշգրտվող տոկոսադրույքի հաշվարկման և հետագա ճշգրտման/փոփոխման հիմքում սահմանվում է Փոփոխուն բաղադրիչի մեկ հիմնական /այսուհետ՝ «հիմնական տոկոսադրույք» և/կամ «հիմնական ցուցանիշ», և մեկ երկրորդային ցուցանիշ /այսուհետ՝ «երկրորդային տոկոսադրույք» և/կամ «երկրորդային ցուցանիշ», որոնք Համաձայնագրի գործողության ողջ ընթացքում չեն կարող փոփոխվել բացառությամբ 5-րդ կետում նշված դեպքերի: Ընդ որում, երկրորդային ցուցանիշը կիրառվում է այն դեպքում, երբ հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի և անհնարին է դառնում ճշգրտվող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար:

- 2.3. Ճշգրտվող տոկոսադրույքի Փոփոխուն բաղադրիչը (բազային տոկոսադրույքը) կախված վարկի արժույթից, որոշվում է հետևյալ շուկայական տոկոսադրույքների միջոցով՝
 - 2.3.1. **ՀՀ դրամով ճշգրտվող տոկոսադրույքի** Փոփոխուն բաղադրիչի (բազային տոկոսադրույքի) համար հիմնական տոկոսադրույք է համարվում ՀՀ պետական (գանձապետական) պարտատուների մինչև մարում եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության եկամտաբերությունը: Որպես երկրորդային տոկոսադրույք է համարվում 6 ամիս կամ դրա բացակայության դեպքում՝ 6 ամսին ամենամոտ ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատուների առաջնային աճուրդում ձևավորված միջին եկամտաբերությունը:
 - 2.3.2. **ԱՄՆ դոլարով ճշգրտվող տոկոսադրույքի** Փոփոխուն բաղադրիչի (բազային տոկոսադրույքի) համար հիմնական տոկոսադրույք է համարվում ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (ICE LIBOR USD 6

Month): Որպես երկրորդային տոկոսադրույք է համարվում 6 ամիս ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունը:

2.3.3. **Եվրոյով ճշգրտվող տոկոսադրույքի** փոփոխուն մասի (բազային տոկոսադրույքի) համար հիմնական տոկոսադրույք է համարվում Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (ICE LIBOR EUR 6 Month): Որպես երկրորդային տոկոսադրույք է համարվում Եվրոպական փողի ինստիտուտի կողմից հրապարակվող (European Money Market Institute) 6 ամիս ժամկետայնությամբ Եվրոյով Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (EURIBOR 6 Month):

- 2.4. Ճշգրտվող տոկոսադրույքի Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչը սահմանվում է վարկավորման պայմաններով և ամրագրվում է վարկային պայմանագրով յուրաքանչյուր վարկի դեպքում առանձին հիմք ընդունելով վարկի տրամադրման վերաբերյալ Բանկի իրավասու մարմնի որոշումը:
- 2.5. Համաձայնագրի և Հիմնական Համաձայնագրի իմաստով Հաճախորդի (Վարկառուի) համար Ճշգրտվող տոկոսադրույքի Փոփոխուն բաղադրիչը (բազային տոկոսադրույքը) Հիմնական Համաձայնագրի կնքման պահին **կազմում է` --- տոկոս** իսկ Հաստատուն (ֆիքսված) մասը **կազմում է` ---- տոկոս**:

3 ԲԱԶԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿՈՒՄԸ, ԹԱՐՄԱՅՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

- 3.1. ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները (եկամտաբերության կոր)՝ հետևյալ հղմամբ՝
<https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx>

6 ամիս կամ դրա բացակայության դեպքում՝ 6 ամսին ամենամոտ ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային աճուրդում ձևավորված միջին եկամտաբերության տեղեկատվության աղբյուր է Հայաստանի ֆոնդային բորսային պաշտոնական կայքը հետևյալ հղմամբ.

<https://amx.am/am/9/trading/153/gbond-auctions>

- 3.2. ԱՄՆ դոլարով և Եվրոյով 6 /վեց/ ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքի (ICE LIBOR USD 6 Month և ICE LIBOR EUR 6 Month) վերաբերյալ տվյալների աղբյուր կարող են հանդիսանալ համապատասխանաբար, հետևյալ հղումներում տեղադրված տեղեկատվությունը՝
<https://fred.stlouisfed.org/series/USD6MTD156N> և <https://fred.stlouisfed.org/series/EUR6MTD156N>

6 ամիս ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության համար տեղեկատվության աղբյուր կարող է հանդիսանալ հետևյալ հղմամբ տրամադրվող տեղեկատվությունը.

<https://fred.stlouisfed.org/series/DGS6MO>

Եվրոպական Փողի Ինստիտուտի կողմից հրապարակվող (European Money Market Institute) Եվրոյով Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքի համար տեղեկատվական աղբյուր կարող է հանդիսանալ հետևյալ հղմամբ ստացված տեղեկատվությունը.

<https://www.emmi-benchmarks.eu/euribor-org/euribor-rates.html>

- 3.3. Համաձայնագրի 3.1 և 3.2. կետերում նշված ինտերնետային հղումների փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ Համաձայնագրի և/կամ նրա գործողության հանդեպ, բացառությամբ Համաձայնագրի 5.1. կետում նշված հատուկ դեպքերի:
- 3.4. Բազային տոկոսադրույքի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Ընդ որում՝

3.4.1. Փետրվարի 1-ի համար Բազային տոկոսադրույքը հավասար է նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ համապատասխան տոկոսադրույքի թվաբանական միջինին:

- 3.4.2. Օգոստոսի 1-ի համար Բազային տոկոսադրույքը հավասար է տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա հունիսի 31-ը ներառյալ համապատասխան տոկոսադրույքի թվաբանական միջինին:
 - 3.4.3. Ոչ աշխատանքային օրերին միջինի հաշվարկում կրկնվում է նախորդ աշխատանքային օրվա տոկոսադրույքը:
 - 3.4.4. Համաձայնագրի 3.4 կետում նշված Փոփոխուն բաղադրիչի (բազային տոկոսադրույք) հաշվարկման եղանակը/մեթոդը չի կարող փոփոխվել Համաձայնագրի և Հիմնական Համաձայնագրի գործողության ողջ ժամանակահատվածում
- 3.5. **Փոփոխված Բազային տոկոսադրույքը և դրա փոփոխության մասին հայտարարությունը տեղադրվում է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ՝ փետրվար և օգոստոս ամսվա առաջին աշխատանքային օրը: Ընդ որում, Կողմերը սույնով համաձայնում են, որ Բանկի ինտերնետային կայքէջում ճշգրտված տոկոսադրույքի տեղադրումը համարվում է Վարկառուի համար փոփոխության/ճշգրտման մասին պատշաճ տեղեկացում և ծանուցում, քանի դեռ Համաձայնագրի և Հիմնական համաձայնագրի գործողության ողջ ընթացքում Վարկառուի կողմից այլ հանձնարարական/դիմում չի տրվել ծանուցման եղանակը փոփոխելու համար:**

<https://ameriabank.am/PressContent.aspx?id=6302&subcat=702&mt=image/jpeg&lang=33>

4 ՃՇՁԳՐՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ՓՈՓՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

- 4.1. Համաձայնագրի հիման վրա ճշգրտվող տոկոսադրույքի առաջին վերանայումը տեղի է ունենում Հիմնական Համաձայնագրի կնքումից 3 /երեք/ տարի հետո, բացառությամբ Համաձայնագրի 5.2 կետում նշված դեպքի: Դրանից հետո պարբերական վերանայումները կարող են իրականացվել յուրաքանչյուր 6 /վեց/ ամիսը մեկ: Մինչև վերանայման առաջին ամսաթիվը Բազային տոկոսադրույք է համարվում Հիմնական Համաձայնագրի կնքման ամսաթվին գործող Բազային տոկոսադրույքը:
- 4.2. Յուրաքանչյուր վերանայման ամսաթվից մինչև հաջորդ վերանայման ամսաթիվը Բազային տոկոսադրույք է համարվում վերանայման տվյալ ամսաթվի դրությամբ գործող Բազային տոկոսադրույքը, և վարկի տոկոսավճարների հաշվեգրումն ու գանձումը կատարվում է վերանայված տոկոսադրույքով:
- 4.3. Փոփոխված տոկոսադրույքների կիրառման ամսաթիվ է համարվում Բազային տոկոսադրույքի փոփոխման հերթական ամսաթվին (փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրը) հաջորդող ամսվա մարման ամսաթիվը:
- 4.4. Բազային տոկոսադրույքը հաշվելիս համապատասխան հաշվարկներն իրականացվում են մաթեմատիկական կլորացման կանոններով՝ 0.5 /գրո ամբողջ հինգ տասնորդական/ տոկոսի ճշգրտությամբ: Օրինակ՝ 8.23%-ը կդիտվի իբրև 8.0%, 8.25%-ը կդիտվի 8.5, իսկ 8.41%-ը՝ իբրև 8.5%:
- 4.5. Փոփոխված տոկոսադրույքը կիրառվում է վարկի մնացորդի նկատմամբ ոչ շուտ, քան Վարկառուին այդ մասին տեղեկացնելուց 1 /մեկ/ ամիս հետո՝ Համաձայնագրի 3.5 կետով սահմանված կարգով:
- 4.6. Կողմերը սույնով հավաստում են, որ ցանկացած դեպքում Վարկի տոկոսադրույքը չի կարող գերազանցել --- տոկոսը և նվազել --- տոկոսից: Ընդ որում Տոկոսադրույքի բարձրացման առավելագույն շեմը չի կանոն գերազանցել Տոկոսադրույքի նվազեցման առավելագույն շեմը:

5 ԲԱՑԱՌԻՎ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

- 5.1. Եթե հիմնական և երկրորդային ցուցանիշները դառնում են անհասանելի և անհնարին, Կողմերը սույնով հաստատում են իրենց համաձայնությունը, որ հաջորդ ժամանակահատվածի համար Բանկի կողմից առաջարկվի համանման այլ ցուցանիշ՝ բացառապես հիմք ընդունելով ՀՀ ԿԲ կամ օրենսդրությամբ սահմանված չափանիշները: Ճշգրտվող տոկոսադրույքն անհասանելի և անհնարին է համարվում ստորև թվարկված բացառիկ հանգամանքների առկայության պայմաններում՝
 - 5.1.1. Տեղի են ունենում էական փոփոխություններ շուկայական տոկոսադրույքի հաշվարկման կարգում:
 - 5.1.2. Դադարեցվում են տվյալ տոկոսադրույքի վերաբերյալ 2.3.1., 2.3.2. կամ 2.3.3. կետերում նշված տվյալների հրապարակումը՝ համապատասխան արժույթի նկատմամբ,
 - 5.1.3. Բանկի իրավասու մարմնի հիմնավոր կարծիքով տվյալ տոկոսադրույքն այլևս չի արտահայտում շուկայական իրավիճակը:

5.1.4. ՀՀ օրենսդրական փոփոխությունները արգելում կամ անհնարին են դարձնում տոկոսադրույքի փոփոխությունը Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

5.1.5. Տնտեսագիտորեն կամ իրավաբանորեն այլ ակնհայտ հիմնավոր և բացառիկ պատճառներով ու հիմքերով

5.1.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

5.2. Սույնով Վարկառուն տալիս է իր համաձայնությունը առ այն, որ Բանկը իրավունք ունի ճշգրտել/փոփոխել Վարկի տոկոսադրույքը հոգուտ Վարկառուի Համաձայնագրի և/կամ Հիմնական Համաձայնագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի և ցանկացած հաճախականությամբ:

6 ԱՅԼ ԴՐՈՒՑԹՆԵՐ

6.1. Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարումը պարտադիր է Կողմերի իրավահաջորդների համար:

6.2. Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, Կողմերի և պարտավորությունների կատարման ապահովման միջոց տրամադրող անձանց (առկայության դեպքում) քանակով, որոնք հավասարազոր օրինակներ են: Յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ: Միևնույն ժամանակ Համաձայնագրի ստորագրմամբ յուրաքանչյուր կողմ հավաստում է իր կողմից Համաձայնագրի ստացումը

6.3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Համաձայնագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

7 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ

ՀԱՃԱՆՈՐԴՎԱՐԿԱՌՈՒ

«Ամերիաբանկ» ՓԲԸ

.....

Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 2

Անձնագիր՝

Իրավասու անձ՝

Հասցե՝

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ստորագրություն

Կ.Տ